Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ

(31 դեկտեմբերի 2004 թ.)

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ.

Ամանորի տոնական այս երեկո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ջերմորեն ողջունում և Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ամենքիդ ի Հայրենիս և ի Սփյուռս աշխարհի:

Հուսավառ ու հոգեշաղախ զգացումներով են փրոփում այս օրերին մեր սրտերը: Քրիստոնյաներիս համար տարեմուտը հրաշազարդ է Սուրբ Ծննդյան խորհրդով, մարդկային մեր կյանքում Փրկչի աստվածային հայտնության հոգևորոգությամբ: Ողջ քրիստոնյա աշխարհը սկիզբ առնող տարին ողջունում է երկնառաք խաղաղության հրավերով ու առանձնակի խնդությամբ:

Փառք և գոհություն Աստծո: Խաղաղ տարի պարգևեց մեզ հայրենի եզերքներում:

Անցնող տարին խաղաղության հետ հուսադրող ձեռքբերումներ բերեց մեր ժողովրդին: Հակառակ տեղ գտած անհանգստությունների ու դժվարությունների, Հայաստանում և Արցախում գործադրվեցին ջանքեր՝ ուղղված տնտեսական ու հասարակական կյանքի վերափոխումներին, մշակույթի զարգացմանը, գիտության ու կրթության առաջընթացին: Կյանք առան շինարար իրագործումներ, որոնց բազմապատկումով պիտի մոտենա հեռանկարն ապահով ու հզոր Հայրենիքի, որ տուն կանչի իր պանդուխտ զավակներին և միշտ լինի հույսի ապավենը համայն հայության: Մեր ժողովրդի այս լավատեսության ու վստահության արգասիքներն են Հայրենիքի և Սփյուռքի օրավուր աճող համագործակցությունը, համահայկական հավաքներն ու միջոցառումները:

Օրհնաբեր էր անցնող տարին եկեղեցական մեր կյանքում: Ձեռնադրվեցին և ծառայության կոչվեցին տասնյակ եկեղեցականներ, Հայրենիքում և Սփյուռքի մեր թեմերում իրենց դռները բացեցին նոր ու նորոգված աղոթատներ, որոնք նոր աշխույժ են բերում զարթոնք ապրող մեր Եկեղեցուն: Հոգու մեծ մխիթարությամբ ենք վերհիշում աշխարհատիյուռ մեր զավակների հետ հանդիպումներն անցնող տարվա ընթացքում, որ եղան մեր ժողովրդի զորավոր հավատի, Սուրբ Էջմիածնի հանդեպ մեծ ու պայծառ սիրո վկայություններ:

Եկող տարում տոնախմբելու ենք մեր գոյության խորհուրդը կերտած սքանչելագործ Հայոց Գրերի 1600-ամյակը և ոգեկոչելու ենք 90-ամյա տարելիցը Մեծ եղեռնի՝ Հայոց ցեղասպանության համընդհանուր դատապարտման արդար օրվա հավատով: Երկու մեծ հիշատակություններ՝ մեկը կապված մեր պատմության խնդագին ու պանծալի, մյուսը՝ ողբերգական էջերի հետ, սակայն երկուսն էլ վկայող մեր ժողովրդի հարատև հառնող ոգու և ազգային-հոգևոր մեր ամբողջականության մասին: Մեր պատմության այս հիշատակությունները ավելի պիտի բյուրեղացնեն արդի հայ իրականությունը և զորացնեն հայոց միացյալ կյանքի, լուսաշող գալիքի մեր նորոգված հույսերը: Սիրելիներ, այս նվիրատես հայացքով է, որ այսօր սպասում ենք փրկչական 2005 թվականին:

Տարեմուտի այս երեկո ուրախ ենք բոլորս նորի սպասումով: Նորի ակնկալությունը միշտ մաքուրն է, ավելի լավը: Եկող նոր տարվա հետ կապում ենք այն ամենը, ինչ կուզենայինք բարեփոխված տեսնել, ավելի լավն ու կատարյալը տեսնել: Դժվարություններ ու խնդիրներ ունենք բազմաթիվ, որոնք կուզենայինք, որ շուտով վճռվեն, արագորեն կարգավորվեն, ու մեր երկրում հաստատվի ցանկալին, ավելի բարեկարգը, և ամենուր ապահով ու բարօր կյանքը լցվի ուրախությամբ: Մեզանով է, որ պիտի գա այդ նոր ժամանակը, տարին դառնա նոր ժամանակ: Ավետարանն ասում է մեզ. «Նորոգվեցեք ձեր մտքով ու հոգով և հագեք նոր մարդը, որ ստեղծված է ըստ Աստծո՝ արդարությամբ ու ճշմարիտ սրբությամբ» (Եփես. Դ 23–24): Նորոգված հոգով դիմավորենք եկող ժամանակը, Աստծո հետ, մեր Հայրենիքի ու մեր ժողովրդի սրբազան տեսիլքներով: Աղոթում ենք, որ Աստված ուժ և կարողություն պարգևի մեզ բոլորիս, որպեսզի լրացնենք այն, ինչ թերի մնաց անցնող տարում, հաստատուն քայլերով ընթանանք դեպի հայրենի մեր երկրի ազատ կյանքի շինություն ու բարգավաճում, մեր ժողովրդի բարի հույսերի, ազնիվ ու արդար նպատակների մարմնավորում, և թող մեր սերունդները գնահատեն մեր ժամանակն իբրև գրո արժանի գործերի ժամանակ:

Մեր աղոթքն է, որ Բարձրյալի օրհնությամբ խաղաղության մեջ առաջնորդվի 2005 թվականը բոլոր ժողովուրդների կյանքում, մեր Հայրենիքի և համայն հայոց կյանքում: Տարեմուտի մեր առաջին մաղթանքով լինենք նեղյալների ու կարոտյալների հետ, պատերազմական իրավիճակների դժվարությունները կրող մեր ազգի զավակների հետ, Հայրենիքի սահմանները պաշտպանող Հայոց բանակի մարտիկների հետ և բոլոր նրանց հետ, ովքեր այս պահին տարեմուտը դիմավորում են իրենց ծառայության մեջ: Թող Փրկիչ մեր Տերը խաղաղության իր շնորհով ամենքիս հետ լինի՝ պարգևելով առատ ու բարօր տարի, երջանիկ օրհնյալ օրեր:

Շնորհավոր Նոր տարի: